ARMENIA EITI Extractive Industries Transparency Initiative

ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հունիսի 29, 2018թ.
Երևան

Բովանդակություն

1. Տարեկան կատարողականի ընդհանուր գնահատականը 3

2. ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրում սահմանված թիրախների և գործողությունների կատարողականի գնահատում 6

3. ԱՃԹՆ-ի պահանջների կատարողականի գնահատում 28

4. ԱՃԹՆ-ի գործընթացում հայտնաբերված ուժեղ և թույլ կողմերը 34

5. Իրականացման ընդհանուր ծախսերը 38

6. Լրացուցիչ դիտարկումներ 51

7. ԱՃԹՆ-ի սույն հաշվետվությունը քննարկվե՞լ է բազմաշահառու խմբից դուրս 52

8. Հաշվետու ժամանակահատվածում բազմաշահառու խմբում անդամակցության մանրամասներ 53

1. Տարեկան կատարողականի ընդհանուր գնահատականը

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է: Այդ նպատակին հասնելու համար խթանվում է հանքարդյունահանող ոլորտում (նավթ, գազ և մետաղներ) ներգրավված կազմակերպությունների և պետական գերատեսչությունների կողմից թափանցիկությունը և հաշվետվողականությունը՝ քաղաքացիների համար բացահայտելով կազմակերպությունների՝ պետական և համայնքային բյուջեներին տրված ընդհանուր վճարումները և իրականացնելով կառավարության հայտարարած մուտքերի հետ անկախ համադրություն:

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի բազմաշահառու խումբը (ԲՇԽ) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորվել է վերահսկել ԱՃԹՆ-ի իրականացումը: Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ն կազմված է կառավարության, հանքարդյունահանող կազմակեպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամների ընդհանուր թիվը 15-ն է, որից՝ 6 պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ, 4 հանքարդյունահանող կազմակերպությունների ներկայացուցիչներ, 4 քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և 1 գիտության ոլորտի ներկայացուցիչ: ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահն է հանդիսանում Դավիթ Հարությունյանը: Նախաձեռնությունը համարվում է եռակողմ համագործակցության եզակի հարթակ Հայաստանում, երբ շահագրգիռ կողմերը համատեղ աշխատանքի միջոցով լավագույնս են ծառայում երկրի շահերին:

2017 թվականի մարտի 9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած ԱՃԹՆ-ի խորհրդի նիստին հաստատվեց Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը, և Հայաստանի Հանրապետությանը շնորհվեց ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ:

Հատված ԱՃԹՆ-ի խորհրդի նիստի որոշումից.

> ԱՃԹՆ-ն ընդունում է Հայաստանի Հանրապետությանը որպես ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր՝ 2017 թվականի մարտի 9-ին: Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է իր առաջին ԱՃԹՆ-ի զեկույցը հրապարակի թեկնածու դառնալուց հետո 18 ամսվա ընթացքում (այն է՝ մինչև 2018 թվականի սեպտեմբերի 9-ը): Հայաստանը պետք է մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը հրապարակի 2017 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն: Վավերացումը կսկսվի թեկնածու դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում (այն է՝ մինչև 2019 թվականի սեպտեմբերի 9-ը): Ըստ ԲՇԽ-ի ներկայացրած աշխատանքային ծրագրի՝ ԱՃԹՆ-ի խորհուրդն ակնկալում է, որ Հայաստանը մինչև 2018 թվականի հունվարի 1-ը կհրապարակի իրական սեփականատերերի քարտեզը:

Առաջնորդվելով ԱՃԹՆ-ի խորհրդի կողմից սահմանված վերջնաժակետներով՝ Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի 2017թ. գործունեությունը միտված է եղել ԱՃԹՆ-ի խորհրդի որոշման մեջ ամրագրված աշխատանքների իրագործման վրա:

2017թ. ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ ձեռք բերելուց հետո Հայաստանը շարունակեց քայլեր կատարել ԱՃԹՆ-ի ներդրման, տեղական և մարզային շահագրգիռ կողմերի իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Ողջ տարվա ընթացքում ԲՇԽ-ն աշխատում էր ներգրավել տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական գերատեսչություններ, համայնքներ, ընկերություններ և քաղաքացիական հասարակություն, նպատակ ունենալով բնական ռեսուրսներից ստացվող եկամուտների արդյունավետ կառավարման, իրական սեփականատերերի բացահայտման և այլ բարեփոխումների վերաբերյալ ԱՃԹՆ-ի ուղերձը հասցնել բոլոր կողմերին:

Բացի շահագրգիռ կողմերի ներգրավումից, 2017 թվականին ԲՇԽ-ի գործունեությունը հիմնականում ուղղված էր ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակման նախապատրաստական աշխատանքներին:

Հաշվետու տարվա ընթացքում ԲՇԽ-ի կողմից ձեռնարկված հիմնական գործողությունները ներառում էին.

- 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրության նախագծի մշակում:
- ԱՃԹՆ-ին համապատասխանեցման նպատակով ՀՀ օրենքների նախագծերի մշակման աշխատանքներ: Փոփոխությունները միտված են օրենսդրության մեջ ԱՃԹՆ-ի ստանդարտով սահմանված ընդերքօգտագործման ոլորտում տեղեկատվության հրապարակումը որպես պարտադիր պահանջ ամրագրմանը:
- Հայաստանի Հանրապետության մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում և հրապարակում: Այն ընդգրկում է 2018-2019 թվականներին նախատեսվող միջոցառումները, որոնց իրականացման արդյունքում 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրությանը հասանելի կլինեն ՀՀ մետական հանքավայրերի իրական սեփականատերերի անունները:
- հանրային իրազեկման միջոցառումներ, որոնց շարքում առանձնապես կարևորվում են մարզային այցելությունները, հանրային և մարզային հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդաշարն ու տեղեկատվական հոլովակները:
- ԱՃԹՆ-ի հիմնական փաստաթղթերի մատչելիության ապահովում հանրության լայն շրջանակների համար, մասնավորապես՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի հայերեն թարգմանություն և հրապարակում:

- Աշխատանք դոնոր կազմակերպությունների հետ: Հաշվետու տարում ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացին իրենց աջակցությունն են ցուցաբերել Համաշխարհային բանկը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը, Հայաստանում Միացյալ Թագավորության (ՄԹ) դեսպանատունը, Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչությունն ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ):
- Աշխատանք ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հաշվետու տարին վճռորոշ էր ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացի ինստիտուցիոնալ հիմքերի մշակման, ֆինանսական երաշխիքների հայթայթման, շահագրգիռ բոլոր կողմերի ներգրավմամբ «ԱՃԹՆ-ի համայնք» ձևավորելու, ԲՇԽ-ի անդամների և մյուս ներկայացուցիչների կարողությունների բարձրացման տեսանկյունից:

2. ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրում սահմանված թիրախների և գործողությունների կատարողականի գնահատում

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի 2017-2018ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՆՊԱՏԱԿԸ	Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 1. ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի տեխնիկական առաջադրանքի մշակում, կազմակերպության ընտրության մրցույթի անցկացում, կազմակերպության հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ տեխնիկական առաջադրանք (մայիս, 2017), պայմանագիր կազմակերպության հետ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հոկտեմբեր	Իրականացվել է (մշակվել և հաստատվել է կայքի տեխնիկական առաջադրանքը և 2017 թ. դեկտեմբերին հայտարարվել է մրցույթ)	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 2. ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի ստեղծում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ ՀՀ ԱՃԹՆ-ի կայք, տվյալների բազաներ, տվյալների բազաների վերլուծության գործիքներ՝ տեղեկատվությունը մատչելի տեսքով և առցանց ներկայացնելու, հարցումներ կատարելու, տվյալներն ազատ տեսնելու համար, առցանց հաշվետվությունների ներկայացման պորտալի ձևավորում *Վերջնաժամկետը*՝ 2018թ. փետրվար	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 3. Կայքի ընթացիկ սպասարկում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ընտրված կազմակերպություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 4. ԱՃԹՆ-ի կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ կայքում հրապարակված հաշվետվություններ, տեսագրությունների, արձանագրություններ *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 5. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի հաշվետվություն, ԲՇԽ-ի տարեկան հաշվետվություն, տեղեկատվական տեսահոլովակներ *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 7. Հաղորդակցության ռազմավարության[1] մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ հաղորդակցության ռազմավարության նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. մայիս	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 8. Հաղորդակցության ռազմավարության հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ հաղորդակցության ռազմավարություն *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հունիս	Չի իրականացվել	ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ կլոր սեղաններ, հանդիպումներ, այդ թվում ազդակիր համայնքների ներկայացուցիչների հետ, հանդիպումներ կրթական հաստատությունների հետ *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 10. ԱՃԹՆ զեկույցի պաշտոնական ներկայացում /	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**

[1] Հեռահաղորդակցության ռազմավարությունը 2017 թ. մայիսի 5-ի նիստի ընթացքում վերանվանել է «Հանրային հաղորդակցության ռազմավարության»:

կոնֆերանս	*Արդյունքները*՝ ԱՃԹՆ կոնֆերանս *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հոկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն

ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային ծրագրում ամրագրված մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովման նպատակին հասնելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջը[2] հաշվետու ժամանակահատվածում մշտապես թարմացվել է, ներկայացվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Ստեղծվել և պարբերաբար թարմացվել են Facebook[3], YouTube[4] և Twitter[5] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվում է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելությունը լայն հանրության համար:

Մարտի 24-ին ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության թեկնածու երկիր դառնալուն նվիրված միջոցառումը[6]: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ վարչապետը, փոխվարչապետը, նախարարներ, ԱՄՆ և ՄԹ դեսպանները, ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրենը, Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, քաղաքացիական հասարակության և արդյունահանող կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեսաուղերձներ հղեցին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ղեկավար Յոնաս Մոբերգը և ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի այլընտրանքային անդամ Օլեկսեյ Օռլովսկին: Միջոցառումը լայնորեն լուսաբանվեց Հայաստանի Հանրապետությունում գործող հեռուստաընկերությունների և էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից: Միջոցառման հաջորդ օրը մամուլի ասուլիս հարցազրույց տեղի ունեցավ, որին հետևեց նաև հարցազրույց media.am կայքին[7]:

Հաշվետու տարում մշակվել և տպագրվել է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի վերաբերյալ 2 տեղեկատվական թերթիկ՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Տեղեկատվական թերթիկները տարածվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի տարբեր միջոցառումների, այդ թվում՝ մարզային այցելությունների և աշխատաժողովների ժամանակ:

Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով մարզային հանդիպումներ են տեղի ունեցել Լոռու և Սյունիքի մարզերում, որոնց մասնակցել են նաև Վայոց Ձորի մարզի ներկայացուցիչներ:

Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակվող «Հրապարակում» հաղորդման շրջանակներում պատրաստվել է «Թափանցիկ հանքարդյունաբերություն» հաղորդաշարը, որի նպատակն էր հանրությանը իրազեկել

[2] http://gov.am/am/eiti/

[3] https://www.facebook.com/EITIArmenia/

[4] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A

[5] https://twitter.com/EITI_Armenia

[6] http://www.gov.am/am/news/item/12895/

[7] https://media.am/eiti-in-armenia

Հայաստանում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ներդրման աշխատանքների մասին, ներկայացնել Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամներին, նրանց, ինչպես նաև ոլորտում ներգրավված այլ մասնագետների կարծիքը նախաձեռնության և դրանից ակնկալվող օգուտների վերաբերյալ: Եթեր է հեռարձակվել 11 հաղորդում.

- *Հաղորդում 1*[8]. Հարցազրույց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ Դավիթ Հարությունյանի հետ,
- *Հաղորդում 2*[9]. Հարցազրույց ԲՇԽ-ի արդյունահանող կազմակերպությունները ներկայացնող անդամներ Արմեն Ստեփանյանի և Պերճ Խաչատրյանի հետ,
- *Հաղորդում 3*[10]. Հարցազրույց ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամ Հարություն Մովսիսյանի և ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կետրոնի տնօրեն Ալեն Ամիրխանյանի հետ,
- *Հաղորդում 4*[11]. Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր դառնալուն նվիրված միջոցառման լուսաբանում:
- *Հաղորդում 5*[12]. ԱՃԹՆ-ի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով մարզային հանդիպում Վանաձորում
- *Հաղորդում 6*[13]. Քաղաքացիական հասարակության դերը ԱՃԹՆ-ի գործընթացում, հարցազրույցներ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամներ Սոնա Այվազյանի և Արթուր Գրիգորյանի հետ
- *Հաղորդում 7*[14]. Հարցազրույցներ Հայաստանի ԱՃԹՆ-ի միջազգային գործընկերների՝ Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպան Ջուդիթ Ֆարնուորթի և Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի տնօրեն Լորա Բեյլիի հետ
- *Հաղորդում 8*[15]. ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչ Դիվեկե Ռոգանի այցի և հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման ու ԱՃԹՆ-ի զեկույցի ներկայացման վերաբերյալ աշխատաժողովի լուսաբանում
- *Հաղորդում 9*[16]. Հարցազրույցներ Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի կառավարության խմբակցությունը ներկայացնող անդամներ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Դավիթ Անանյանի և ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանի հետ
- *Հաղորդում 10*[17]. Հարցազրույցներ Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության առաքելության տնօրեն Դեբորա Գրիզերի հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացի, գործընթացին աջակցող ԱՄՆ ՄԶԳ-ի «Հանքարդյունաբերության ոլորտի

[8] https://www.youtube.com/watch?v=kLnhBKdXfDk&t=409s

[9] https://www.youtube.com/watch?v=T4I2uLuGmss&t=228s

[10] https://www.youtube.com/watch?v=L6kcSIaEPuc&t=4s

[11] https://www.youtube.com/watch?v=fGhLBEvVVis&t=19s

[12] https://youtu.be/enjxuZuZKVw

[13] https://youtu.be/qqomeHwRPVI

[14] https://youtu.be/s18wbG-DakY

[15] https://youtu.be/Yo5_sAOSiw0

[16] https://youtu.be/UNzv9ztZcgk

[17] https://youtu.be/XsgORS2Aghw

թափանցիկության բարելավում» ծրագրի և հետագա համագործակցության պատրաստակամության մասին,

- *Հաղորդում 11*[18]*. Նվիրված է եղել* Հանրապետական երկրաբանական ֆոնդի www.geofund.am կայքի շնորհանդեսին, որտեղ բացի միջոցառման լուսաբանումից ներկայացվել են երկրաբանական ֆոնդի նյութերի թվայնացման և ոլորտային մեծածավալ տեղեկատվության հանրայնացման աշխատանքները:

ԱՃԹՆ-ի գործընթացում հանրության ավելի լայն շրջանակ ընդգրկելու համար իրականացվվել է ԱՃԹՆ-ի ստանդարտի թարգմանությունը: Հայերեն ԱՃԹՆ-ի ստանդարտը հասանելի է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության պաշտոնական կայքում[19] և ՀՀ կառավարության աշխատակազմի պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջում:

ԱՃԹՆ-ի վերաբերյալ հասարակության լայն շրջանում իրազեկվածության բարձրացման համար հաշվետու տարում պատրաստվել են վեց սոցիալական տեսահոլովակներ (Ինչ է ԱՃԹՆ-ն[20], Հանքարդյունաբերության դերը ՀՀ տնտեսությունում[21], Բազմաշահառու խումբ[22], Իրական սեփականատերեր[23], ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացը[24], կարճ տեսաֆիլմ՝ ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրի և Հանրապետական երկրաբանական ֆոնդի www.geofund.am կայքի ու կայքից օգտվելու ուղեցույցի վերաբերյալ[25]) և Հայաստանի ԱՃԹՆ-ի յութուբյան էջում[26]: Հոլովակները տարածվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջում: Բացի այդ, Հայաստանի ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջում հրապարակված գովազդային արշավ, որի ընթացքում խթանվել են 5 հոլովակների ու ֆիլմի համար ավելի մեծ դիտողականություն ապահովելու նպատակով իրականացվել է գովազդային արշավ: Տեսահոլովակները տարածվել են նաև մարզային՝ Կապանի «Սոսի» և Լոռու մարզի «Ֆորտունա» հեռուստաընկերություններով:

Լրացուցիչ գործողություններ

2017թ. սեպտեմբերի 14-ին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի աջակցությամբ տեղի է ունեցել Հանրապետական երկրաբանական ֆոնդի www.geo-fund.am կայքի շնորհանդեսը: Ծրագրի աջակցությամբ ֆոնդի պահոցում անցած դարի 20-ական թվականներից հավաքագրված և պահպանվող հանրապետության տարածքում կատարված ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում ստացված ամբողջ երկրաբանական և այլ տեղեկատվությունը՝ համապատասխան փաստաթղթերի (տեղեկանքների, հաշվետվությունների, գծագրական նյութերի և այլն) տեսքով թվայնացվել է և բոլոր նյութերը հասանելի են www.geo-fund.am կայքում: Միջոցառման մասնակիցներին ներկայացվել է ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացը Հայաստանում, ինչպես նաև ներկայացվել Ֆոնդի տեղեկատվության թվայնացման և հասանելիության

[18] https://youtu.be/JytWnipH05A

[19] https://eiti.org/sites/default/files/documents/eiti_standard_arm-new_0.pdf

[20] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2108693685822912/

[21] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2120102438015370/

[22] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2141558569203090/

[23] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2130584020300545/

[24] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2158475167511430/

[25] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2147564658602481/

[26] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A

կարևորությունը հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության ապահովման համատեքստում, ինչպես նաև նոր համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ, համաձայն որի վերջինս պատրաստակամություն է հայտնել իր պահոցում գտնվող հաշվետվություններն ու կարևոր գրականությունը նույնպես տրամադրել թվայնացման և կայքում հրապարակման նպատակով[27]:

Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովման նպատակին հասնելու համար նախատեսված ժամկետներում չի իրականացվել հաղորդակցության ռազմավարության մշակումը:

Հաղորդակցության ռազմավարության մշակման համար Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնն (ՀԱՀ ՊՀԿ) իրականացնում է հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքները: Համաձայն հաստատված ժամանակացույցի՝ հանրային հաղորդակցության ռազմավարության վերջնական փաստաթուղթը պետք է ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ին ներկայացվեր 2017թ. օգոստոսին, սակայն հաշվետու ժամանակահատվածում այն չի ներկայացնել: Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի դեկտեմբերի 6-ին կայացած նիստի ընթացքում նախագծի ներկայացման նոր վերջնաժամկետ էր սահմանվել դեկտեմբերի 19-ը, սակայն ժամկետները չեն պահպանվել:

Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի ստեղծման աշխատանքները ֆինանսավորվելու են Հայատանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության կողմից: 2017թ. դեկտեմբերին կայքի մշակումն իրականացնող ընկերության ընտրության համար մրցույթ է հայտարարվել ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության կողմից:

Ամփոփելով վերը նշված միջոցառումները՝ կարելի է եզրակացնել, որ չնայած մի շարք միջոցառումների հետաձգմանը՝ հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի գործընթացների վերաբերյալ մատչելի և ժամանակին տեղեկատվություն ապահովվել է. հանրության շրջանում ԱՃԹՆ-ի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացել է՝ կիրառելով հանրային իրազեկման տարատեսակ մեթոդներ:

ՆՊԱՏԱԿԸ	Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 11. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ Ճանապարհային քարտեզի նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հունիս	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով:	ԲՇԽ,ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 12. Ճանապարհային քարտեզի նախագծի հանրային	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**

[27] https://www.geo-fund.am/hy/library

քննարկումներ	*Արդյունքը*՝ ճանապարհային քարտեզի նախագծի հրապարակում, հանդիպումներ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հուլիս	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով:	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 13. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. օգոստոս	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով: Պահպանվել է ԱՃԹՆ-ի խորհրդով սահմանված վերջնաժամկետը:	ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 14. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի ներկայացում ԱՃԹՆ քարտուղարություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն ներկայացված ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. սեպտեմբեր	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով: Պահպանվել է ԱՃԹՆ-ի խորհրդով սահմանված վերջնաժամկետը:	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն

ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային ծրագրում ամրագրված իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման նպատակին հասնելու համար Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ն համագործակցել է ՎՀԵԲ-ի լոնդոնյան գրասենյակի կողմից ԱՃԹՆ-ն իրականացնող մի շարք երկրներին իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներին աջակցության տրամադրման ծրագրի շրջանակում ներգրավված տեղական և միջազգային և խորհրդատուների՝ Դավիթ Սարգսյանի և Ջերեմի Ուիթի հետ: Խորհրդատուների կողմից մշակվել է Հայաստանի մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի նախագիծը, ինչպես նաև կատարվել է Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն (որը ներառում է իրական սեփականատիրոջ սահմանման առաջարկություն): Խորհրդատուները մի շարք հանդիպումներ են ունեցել ԲՇԽ-ի անդամների, հանքարդյունաբերողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Քննարկումների արդյունքները ներառվել են ճանապարհային քարտեզի նախագծում: Ճանապարհային քարտեզը էլեկտրոնային եղանակով հաստատվել է ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից: ԲՇԽ-ի կողմից հաստատվելուց հետո իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը հրապարակվել է ԱՃԹՆ-ի կայքէջում[28] և ներկայացվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն: Հարկ է նշել, որ հետախուզական գործունեությամբ զբաղվող

[28] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/BO%20roadmap_draft_ARM.pdf

ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտում չի նախատեսվում, քանի որ հարցի վերաբերալ ԲՇԽ-ի խմբակցությունների միջև միասնական որոշում չի կայացվել:

Ընդհանուր առմամբ, աշխատանքային ծրագրով նախատեսված 11-14-րդ միջոցառումներն իրականացվել են ուշացումով, ինչը պայմավորված է դոնոր կազմակերպության՝ ՎԶԵԲ-ի կողմից Տեխնիկական առաջադրանքի ուշ հաստատումով, ներկայացված ժամանակացույցով և ընթացակարգերով:

Ամփոփելով կարելի է փաստել, որ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը մշակվել և սահմանված ժամկետներում հրապարակվել է, ինչն իրականացվել է հարցին առնչվող օրենսդրական դաշտի համակողմանի վերլուծությունից և տարբեր շահառուների կարծիքների ուսումնասիրությունից հետո:

ՆՊԱՏԱԿԸ	ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտում		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 15. ԲՇԽ-ի կողմից տեխնիկական առաջադրանքի կազմում, որի համաձայն տեղական և միջազգային խորհրդատուները կիրականացնեն ուսումնասիրություն անհամապատասխանությունների բացահայտման նպատակով	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ տեխնիկական առաջադրանք *Վերջնաժամկետը*՝ 2017թ. ապրիլ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 16. Օրենսդրության ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ հաշվետվություն, գործողությունների պլան *Վերջնաժամկետը*՝ 2017թ. դեկտեմբեր	Մասամբ է իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, փորձագետ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 17. Հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին *Վերջնաժամկետը*՝ 2017թ. դեկտեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, փորձագետ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 18. ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և գործողությունների պլանի քննարկում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և գործողությունների պլանի քննարկում և հաստատում *Վերջնաժամկետը*՝ 2017թ. դեկտեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			

Աշխատանքային ծրագրում ամրագրված ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրության, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտման նպատակին հասնելու համար ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն համագործակցել է Հայաստանում ՄԹ դեսպանատան հետ: Վերջինիս ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ն սկսել է օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության աշխատանքները: Մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է միջազգային փորձագետի տեխնիկական առաջադրանքը ու օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության կառուցվածքը:

ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից 2017թ. նոյեմբերին ներկայացվել է ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ, որը քննարկվել է շահագրգիռ մարմինների և ԲՇԽ-ի հետ: Շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում մշակված ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը 2017թ. դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ օրենքների նախագծերով սահմանվում են Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցի մշակման համատեքստում ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից հրապարակային հաշվետվությունների ներկայացման պարտադիր պահանջը, հաշվետվություններում ներառվող տեղեկատվության շրջանակը, պետական մարմինների կողմից ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին համապատասխան պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության շրջանակը, ինչպես նաև մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները հրապարակելու պարտադիր պահանջը:

17-18-րդ միջոցառումների չիրականացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունը չի ներկայացվել համաձայն ժամանակացույցի (առաջին նախագիծը պետք է ներկայացվեր հոկտեմբերի 13-ին):

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի համապատասխանեցման շրջանակներում օրենսդրական փոփոխությունների նախագիծ[29]: Առաջարկվող փոփոխություններն ուղղված են ԱՃԹՆ-ի ստանդարտով սահմանված ընդերքօգտագործման ոլորտի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ապահովմանը, ինչի շնորհիվ ոլորտը ավելի թափանցիկ ու հաշվետվողական կդառնա՝ խթանելով մրցակցային կառավարումն ու վերահսկողությունը: Փաթեթի մշակման աշխատանքներում ակտիվորեն ներգրավված են եղել նաև շահագրգիռ պետական մարմինները:

Այսպիսով, ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն որպես այդպիսին հաշվետու ժամանակահատվածում չի իրագործվել, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտումն իրականացվել է օրենսդրական փոփոխությունների առաջարկության տեսքով: Նպատակն իրականացվել է մասամբ:

ՆՊԱՏԱԿԸ	Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն և ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզի մշակում		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 19. Տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները

[29] https://www.e-draft.am/projects/602

	Արդյունքը՝ տեխնիկական առաջադրանք *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հոկտեմբեր	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 20. Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. նոյեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 21. Ճանապարհային քարտեզի հաստատում ԲՇԽ-ի կողմից	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ գործողությունների պլան, բյուջե *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հունվար	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 22. Գործողությունների պլանի իրականացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Վերջնաժամկետը՝ 2018թ. դեկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 23. Մասնակցություն ոլորտին վերաբերող քաղաքականության մշակմանը	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ ներգրավում, կարծիքի ներկայացում *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն

ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային ծրագրում ամրագրված «Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն և ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզի մշակում» նպատակին հասնելու համար Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ն համագործակցել է Հայաստանում ՄԹ դեսպանատան հետ: Վերջինիս ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ն օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության, ինչպես նաև 2018 թվականի ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրության շրջանակներում պետք է քններ պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման տարրեր: Մասնավորապես, պետք է մշակվեր պատասխանատու հանքարդյունաբերության նախնական ճանապարհային քարտեզը, որից հետո ԲՇԽ-ն ձեռնամուխ կլիներ պատասխանատու հանքարդյունաբերության համապարփակ ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներին: Նախնական ճանապարհային քարտեզը պետք է ներառվեր օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության մեջ:

19-20-րդ միջոցառումները չեն իրականացվել, քանի որ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունը չի ներկայացվել համաձայն ժամանակացույցի (առաջին նախագիծը պետք է ներկայացվեր հոկտեմբերի 13-ին) (նույնը, ինչ 16-18-րդ միջոցառումների համար):

Լրացուցիչ գործողություններ

Ինչ վերաբերում է մասնակցությանը ոլորտին վերաբերող քաղաքականության մշակմանը, ՀՀ կառավարության աշխատակազմի և ՀԲ-ի հայաստանյան գրասենյակի համագործակցության արդյունքում մշակվել և ձեռք է բերվել նոր դրամաշնորհային ծրագիր, որը նպատակ ունի աջակցել Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերության ոլորտի նոր համապարփակ ռազմավարության մշակմանը: Նույն դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մինչ ռազմավարության մշակումը պետք է իրականացվեն երկու կարևոր ուսումնասիրություններ, որոնց հիման վրա կկայացվեն ռազմավարական ողղությունների վերաբերյալ որոշումներ: Քարտուղարության նախաձեռնությամբ ԲՇԽ-ն ներգրավվել է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտում ռազմավարության մշակման» ծրագրի շրջանակներում մի քանի գործողություններին: Մասնավորապես, ծրագրի շրջանակում համապատասխան տեխնիկական առաջադրանքները (Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատում, Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծություն) ուղարկվել են ԲՇԽ-ի անդամներին կարծիքի, որից հետո ստացված կարծիքների հիման վրանախագծերը լրամշակվել են:

ՀՀ կառավարության աշխատակազմի և ՀՀ բնապահպանության նախարարության համատեղ ջանքերով սկսվեցին Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին որոշման նախագծի կազմման աշխատանքները, որով ակնկալվում էր սահմանել, որ մետաղական օգտակար հանածոների դեպքում ընդերքօգտագործողները մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ եռամսյակային կտրվածքով հաղորդումն ընդերքօգտագործողները լիազոր մարմին պետք է ներկայացնեն եռամսյակային կտրվածքով՝ նախագծի հիմնավորման մեջ նշելով նաև ԱՃԹՆ-ից բխող թափանցիկության անհրաժեշտությունը:

Ամփոփելով կարելի է փաստել, որ հաշվետու ժամանակահատվածում լավագույն միջազգային փորձը չի ուսումնասիրվել ու ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզ չի մշակվել:

ՆՊԱՏԱԿԸ	Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 24. ՀՀ վարչապետի հայտարարություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ հայտարարություն *Վերջնաժամկետը*՝ 2015թ. հուլիս	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 25. ԱՃԹՆ իրազեկման միջոցառումներ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ հանդիպումներ *Վերջնաժամկետը*՝ 2015թ. դեկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 26. ԲՇԽ-ի անդամների առաջադրում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**

	Արդյունքը՝ առաջադրված ԲՇԽ-ի անդամներ *Վերջնաժամկետը*՝ 2016թ. հունիս	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ-ի խմբակցություններ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 27. ԲՇԽ-ի անդամների համար դասընթաց-սեմինարներ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ սեմինար-դասընթացներ *Վերջնաժամկետը*՝ 2016թ. մարտ-նոյեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ, դոնոր կազմակերպություններ, փորձագետներ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 28. ԲՇԽ-ի աշխատակարգի մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ԲՇԽ-ի աշխատակարգի նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2016թ. սեպտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 29. ԲՇԽ-ի աշխատակարգի հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ԲՇԽ-ի աշխատակարգ *Վերջնաժամկետը*՝ 2016թ. դեկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 30. ԱՃԹՆ խորհրդի նիստերին մասնակցություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ԱՃԹՆ խորհրդի նիստեր	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 31. ԲՇԽ-ի նիստ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ԲՇԽ-ի նիստ *Վերջնաժամկետը*՝ 2016թ. հունիսի 27	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 32. ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստ, մեկնարկի միջոցառում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստ, մեկնարկի միջոցառում *Վերջնաժամկետը*՝ 2016թ. նոյեմբերի 25	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 33. «ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման ընդունում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ՀՀ վարչապետի որոշում *Վերջնաժամկետը*՝ 2016թ. նոյեմբերի 24	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ՀՀ կառավարության աշխատակազմ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 34. Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**

մշակում	*Արդյունքը*՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2016թ. դեկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիր *Վերջնաժամկետը*՝ 2016թ. դեկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 36. ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտի մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտի նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2016թ. դեկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 37. ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտի հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտ *Վերջնաժամկետը*՝ 2016թ. դեկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ դոնոր կազմակերպությունների հետ հանդիպում *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 39. ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտի ներկայացում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ներկայացված ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտ *Վերջնաժամկետը*՝ 2016թ. դեկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ՀՀ կառավարության աշխատակազմ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 40. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հիմնում և աշխատանքների ընթացք	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարություն *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հոկտեմբեր, 2018թ. դեկտեմբեր	Իրականացվել է	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 41. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի տարեկան հաշվետության կազմում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի տարեկան հաշվետություն *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հունվար, 2019թ. հունվար	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, կիսամյակային, տարեկան)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ հաշվետվություններ *Վերջնաժամկետը*՝ եռամսյակը մեկ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 44. Մասնակցություն ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսների	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 45. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի անցկացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստեր *Վերջնաժամկետը*՝ եռամսյակը մեկ	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 46. ԱՃԹՆ-ի աշխատանքային պլանի վերանայում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ վերանայված ԱՃԹՆ-ի աշխատանքային պլան *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հունվար, 2019թ. հունվար	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 47. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Իրականացվել է	ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 48. 2019-2020 ԱՃԹՆ աշխատանքային ծրագրի մշակում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ 2019-2020թթ. ԱՃԹՆ աշխատանքային ծրագիր *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հոկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 49. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Վերջնաժամկետը՝ 2017թ. դեկտեմբեր, 2018թ. դեկտեմբեր	Իրականացվել է (ծախսը ներառվել է պետբյուջում)	
ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			

Մինչև հաշվետու ժամանակահատվածը իրականացվել են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման՝ ԱՃԹՆ-ի անդամակցության հայտի ներկայացման համար ԱՃԹՆ-ի ստանդարտով սահմանված պարտադիր քայլերը: Մասնավորապես, 2015թ. հուլիսին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը հայտարարել է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման հանձնառության մասին և պատվիրակել է ԱՃԹՆ-ին անդամակցության աշխատանքների համակարգումը Դավիթ Հարությունյանին: Մինչև 2016թ. կեսերը հանքարդյունահանող կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն անկախ կարգով ընտրել և առաջադրել են ԲՇԽ-ում իրենց խմբակցությունները ներկայացնող անդամների թեկնածուներին: Երեք խմբակցությունների՝ ԲՇԽ-ի կազմում ընդգրկվելու թեկնածուների միջև կայացել են հաճախակի հանդիպումներ՝ քննարկելու նախաձեռնության հետ կապված տարատեսակ հարցեր: Մասնավորապես, հատկանշական էր քաղաքացիական հասարակության կողմից բարձրացված պնդումը որոշումների կայացման ընթացակարգի վերաբերյալ, համաձայն որի ԲՇԽ-ում որոշումների կայացման գործընթացը պետք է կայացվի ոչ թե քվեարկությամբ՝ մեծամասնական կարգով, այլ կոնսենսուսով: Արդյունքում, բոլոր կողմերն ընդունեցին այս պահանջի արդարացիությունը, որն ամրագրվեց ԲՇԽ աշխատակարգում: 2016թ. սեպտեմբերից սկսել է մշակվել, իսկ նույն թվականի դեկտեմբերին հաստատվել է ԲՇԽ-ի աշխատակարգը: 2016թ. նոյեմբերին ԲՇԽ-ի կազմը հաստատվել է «ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշմամբ[30]: Նույն թվականի նոյեմբերին կայացավ ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստը: Այնուհետև 2016-ի դեկտեմբերին մշակվեց և ԲՇԽ-ի կողմից հաստատվեց Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգը[31], Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիրը[32] և Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը: Նույն ամսին ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտը ներկայացվեց ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն:

Աշխատանքային ծրագրում ամրագրված Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովման նպատակին հասնելու համար հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարությունն ***արդյունավետ համագործակցություն*** է իրականացրել դոնոր կազմակերպությունների հետ, մասնավորապես, ՎԶԵԲ-ի լոնդոնյան գրասենյակի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության, Հայաստանում ՄԹ դեսպանատան, Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության, Համաշխարհային բանկի և Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքներին միջազգային կազմակերպությունների մասնակցության հնարավոր ուղղությունները:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ համագործակցության շրջանակում ՎԶԵԲ-ի ԱՃԹՆ-ի իրական սեփականատերերի բացահայտման օժանդակության ծրագրով հաշվետու ժամանակահատվածում խորհրդատուների կողմից մշակվել է իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի նախագիծը և Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն:

2017-ին Հայաստանում ՄԹ դեսպանատունը մեկնարկեց «Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ-ն իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով» ծրագիրը: Ծրագրի իրականացնող գործընկերն է հանդիսանում ՀԱՀ ՊՀԿ-ն: Ծրագրի շրջանակներում մշակվելու են ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական

[30] https://www.e-gov.am/decrees/item/16411/

[31] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_TOR_Armenia.pdf

[32] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Workplan_Armenia_arm(1).pdf

ուսումնասիրությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունը, հանրային հաղորդակցության ռազմավարությունը և անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը, ինչպես նաև իրականացվելու են կարողությունների հզորացման միջոցառումներ:

Կազմվել է Համաշխարհային բանկի դրամաշնորհային հայտադիմումը, և Արդյունահանող ճյուղերի գլոբալ ծրագրային աջակցության (Extractives Global Programmatic Support, EGPS) բազմադոնորային հավատարամագրային հիմնադրամին (Multi-Donor Trust) է ներկայացվել դրամաշնորհային հայտադիմում: Դրամաշնորհի շրջանակներում ակնկալվում է ֆինանսավորել Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակումը, ԲՇԽ-ի ու ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կարողությունների զարգացումը, իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում, ինչպես նաև իրական սեփականատերերի բացահայտմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակում և իրական սեփականատերերի ռեգիստրի ծրագրային ապահովում:

Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության կողմից ֆինանսավորվելու է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի մշակումը, գործարկումը և սպասարկումը ու հայտարարվել է մրցույթ՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը ստեղծելու համար ընկերություն ընտրելու համար: Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը նախատեսվում է գործարկել 2018թ. 2-րդ եռամսյակում:

Կապված Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հիմնման հետ՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի շրջանակում 2016-ին վարձվել է ԱՃԹՆ-ի փորձագետ, որին 2017-ին միացել է ԱՃԹՆ-ի 2-րդ փորձագետը, որոնց կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության գործառույթները: Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարությունը պատրաստակամություն է հայտնել շարունակել ԱՃԹՆ-ի քարտուղարության ֆինանսավորումը: Այդ նպատակով իրականացվել են բյուջետային հայտի կազմման և ներկայացման աշխատանքներ: Ներկայացված հայտով նախատեսվում է վճարել ԱՃԹՆ-ի քարտուղարության ներկայացուցիչների աշխատավարձը և ԱՃԹՆ-ի տարեկան անդամավճարը (2018-ի համար): Հայտը հաստատվել է, և վերոգրյալը ընդգրկվել է ՀՀ 2018 թվականի բյուջեում:

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների շրջանակներում 2017-ին անցկացվել են ԲՇԽ-ի հինգ նիստեր (որոնցից երկուսը աշխատանքային բնույթի էին), որոնց ընթացքում հաստատվել են ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների երեք եռամսյակային հաշվետվությունները: Կազմվել և հաստատվել են նիստերի արձանագրությունները, որոնք հրապարակվել են Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջում[33]: 2017-ին մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի բաց տվյալների քաղաքականության հայեցակարգը[34]:

2017-ին ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները ***համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության*** տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման և ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացման հետ կապված մեկնաբանությունների և խորհրդատվության ստացման նպատակով: Կազմակերպվել են կոնֆերանս զանգեր, իրականացվել է նամակագրություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ:

Հայաստանի ԱՃԹՆ-ի պատասխանատուները մասնակվել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության

[33] http://www.gov.am/am/msgmeeting/

[34] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Open_Data_Policy_Armenia_arm.pdf

կազմակերպած տեսակամուրջ-քննարկումներին, մասնավորապես 2017թ. մայիսին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանի պատասխանատուների, ԱՃԹՆ-ի խորհրդի անդամի և այլընտրանքային անդամի, տարածաշրջանի ԱՃԹՆ-ի անդամ երկրների ԱՃԹՆ-ի պատասխանատուների մասնակցությամբ անցկացվել է տեսակամուրջ-քննարկում, որի հիմնական նպատակն էր ԱՃԹՆ-ի զեկույցներում ներկայացվող տվյալների ապաագրեգացման աստիճանի, մասնավորապես, տվյալները ըստ հանքարդյունաբերական ծրագրերի (թույլտվությունների, լիցենզիաների) ներկայացման հնարավորության, օրենսդրական և հարկային ռեժիմների սահմանափակումների և այլ հարցերի քննարկումը:

ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի անդամների կարողությունների զարգացման նպատակով 2017թ. հունիսին կազմակերպված երկօրյա աշխատաժողովի ընթացքում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչ, Քաղաքականության և տարածաշրջանային տնօրեն Դիվեկե Ռոգանը լուսաբանել է իրական սեփականությանը և նախնական ուսումնասիրությանն առնչվող հարցերը[35]: Աշխատաժողովին բացի ԲՇԽ-ի անդամներից մասնակցել են նաև շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ ինչպես պետական գերատեսչություններից, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպություններից:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից հոկտեմբերին կազմակերպվել է վեբինար ԲՇԽ-ի տարբեր խմբակցությունների ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքներում արդյունավետ ներգրավվածությանը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի ներդրման գործելակերպերի ազգային առանձնահատկությունների քննարկման նպատակով:

ՀՀ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման ընթացքում նամակագրության միջոցով փորձի փոխանակում է իրականացվել ՄԹ իրական սեփականատերերի ռեգիստրի համակարգող մարմնի՝ Բիզնեսի, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության դեպարտամենտի ղեկավարության, Ղազախստանի և Ուկրաինայի ԲՇԽ-ի անդամների հետ: Իսկ ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքի տեխնիկական առաջադրանքի մշակման ընթացքում համագործակցություն է հաստատվել Ղազախստանի և Մոնղոլիայի ԱՃԹՆ-ի պատասխանատուների հետ՝ նրանց ունեցած փորձը փոխառելու նպատակով (մասնավորապես, Մոնղոլիայի ԱՃԹՆ-ի կողմից ներկայացվել է ԱՃԹՆ-ի շրջանակներում հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգին առնչվող ուսումնասիրություն):

ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսներին մասնակցություն.

- ✓ Բաց կառավարման գործընկերության շրջանակներում 2017թ. փետրվարին Կիևում տեղի ունեցած «Բաց կառավարում. Եվրասիական հարթություն» խորագրով տարածաշրջանի երկրների կառավարությունները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ներկայացնող պատվիրակությունների մասնակցությամբ երկօրյա միջոցառմանը Հայաստանի պատվիրակությունը, որպես բաց կառավարման լավագույն հանձնառություն, ներկայացրել է Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացը:
- ✓ 2017 թվականի մարտին ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամներ Խաչիկ Հակոբյանը, Արմեն Ստեփանյանն ու Հարություն Մովսիսյանը մասնակցել են Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության խորհրդի նիստին, որի ժամանակ ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը քննարկել է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը և Հայաստանի Հանրապետությանը շնորհել ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ:
- ✓ 2017թ. հոկտեմբերին Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է ԱՃԹՆ-ի՝ «Իրական սեփականատերերի թափանցիկությունը» խորագրով կոնֆերանսին, որը կայացել է Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտայում:

[35] https://youtu.be/rgjb6vXW8SY

Կոնֆերանսին ներկայացվել է հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերի բացահայտման լավագույն փորձը, քննարկվել են մարտահրավերները, ինչպես նաև ԱՃԹՆ-ի անդամ երկրների պատվիրակությունները փոխանակել են կուտակված փորձը:

2017 թվականի ընթացքում ձևավորվել են ***ԲՇԽ-ի հինգ աշխատանքային խմբեր՝***

- հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խումբ,
- ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքային խումբ,
- օրենսդրական դաշտի ուսումնասիրության և անհամապատասխանությունների բացահայտման աշխատանքային խումբ,
- իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խումբ,
- պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խումբ:

Ձևավորված աշխատանքային խմբերն ունեցել են մի շարք հանդիպումներ ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության, իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի և օրենսդրական դաշտի ուսումնասիրության մշակման աշխատանքներում ներգրավված փորձագետների հետ:

2017թ. մարտին կայացած հանդիպման ժամանակ քննարկվել է ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ Էրիկ Գրիգորյանի՝ ՀՀ վարչապետի օգնական նշանակվելու հիմքով լիազորությունների դադարեցման հարցը: Մարտի 21-ին, համաձայն ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի 25-րդ կետի, ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության այլընտանքային անդամ Արթուր Համբարձումյանին նշանակեց ԲՇԽ-ի ժամանակավոր անդամ: Համաձայն ԲՇԽ-ի աշխատակարգի՝ ԲՇԽ-ի անդամի լիազորությունների ժամկետի ավարտից շուտ դադարեցման դեպքում՝ համապատասխան խմբակցության առաջադրմամբ այլընտրանքային անդամներից ԲՇԽ-ի ժամանակավոր անդամ նշանակվելուց հետո՝ առնվազն երկու ամսվա ընթացքում, ներկայացվում է հիմնական նոր անդամի թեկնածությունը: ԲՇԽ-ի աշխատակարգի նշված պահանջը չիրագործվեց՝ խմբակցության ներսում առկա սկզբունքային տարաձայնությունների պատճառով: ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների առաջարկությամբ հունիսին կայացած ԲՇԽ-ի աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվեց ԲՇԽ-ի մոտեցումը քաղաքացիական հասարակության խմբակցության նոր անդամի ընտրության և շահերի բախման հարցերի շուրջ: Քննարկման արդյունքում առաջարկվեց քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների միջև առաջացած խնդիրները հարթել արբիտրաժային եղանակով: 2017թ. հուլիսին կողմերի համաձայնությամբ ձևավորվեց հաշտարարների խումբ (կազմը՝ Ադելաիդա Բաղդասարյան, լիցենզավորված հաշտարար, Հայկ Ալումյան, փաստաբան, և Էդիկ Բաղդասարյան, լրագրող): Հաշտարարների խումբը կազմվել է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կողմ հնգօրյա ժամկետում առաջարկել է մեկական թեկնածու, իսկ ընտրված երկու թեկնածուները տասը օրվա ընթացքում ընտրել են արբիտրաժի երրորդ (վերջին) անդամին, որը հանդես է գալիս որպես խմբի համակարգող: Կազմված հաշտարարների խումբը գործի քննությունը պետք է իրականացներ քսանօրյա ժամկետում և քսանմեկերորդ օրը՝ ներկայացներ վճիռը կողմերին: Հաշտարարների խումբը վճիռ կայացնում է իր անդամների ձայների մեծամասնությամբ, և ընդունված վճիռը պարտադիր է կողմերի համար: Այնուամենայնիվ, հաշվետու ժամանակահատվածում հաշտարարների խումբը որոշում չընդունեց, և խմբի եզրակացությունն ակնկալվում է ստանալ մինչև 2018թ. հունիս: Հարկ է նշել, որ ԲՇԽ-ի աշխատակարգով սահմանված ժամկետները չեն պահպանվել:

ԲՇԽ-ի անդամներն աշխատել են նաև իրենց խմբակցության ավելի լայն շրջանակ ներառող կազմակերպությունների հետ՝ լայն խմբակցություններին տեղյակ պահելով Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացի իրականացման առաջընթացի և խնդիրների վերաբերյալ: Մասնավորապես, ԱՃԹՆ-ին վերաբերող տեղեկությունները ներկայացվել են Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության շրջանակներում հանքարդյունահանող ընկերությունների ղեկավար

կազմի ներկայացուցիչների հետ պարբերաբար անցկացվող հանդիպումների ընթացքում, ինչպես նաև նույն միության կազմում գործող Կայուն զարգացման խնդիրներով զբաղվող խմբի շրջանում (խմբի հանդիպումներն անցկացվում են նվազագույնը եռամսյակը մեկ անգամ): Քաղաքացիական հասարակության խմբացկությունը 2016-2017թթ. ընթացքում ընդհանուր առմամբ ունեցել է 26 հիմնական հանդիպում, որոնց ընթացքում քննարկվել են ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության ձևավորման, ընտրությունների կազմակերպման, փոխարինող անդամների ընտրության, ԲՇԽ-ում որոշումների կայացման և հանքարդյունաբերության ոլորտի օրակարգային հարցերը, մասնավորապես՝ պատասխանատու հանքարդյունաբերության հետ կապված խնդիրները: ԱՃԹՆ-ին համապատասխանեցման օրենսդրական փոփոխությունները պատրաստելու ընթացքում տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ ներգրավված են եղել նախագծերի մշակման աշխատանքներին, իսկ գերատեսչություններում առանձնացվել են ԱՃԹՆ-ի հարցադրումներով զբաղվող աշխատակիցներ, ովքեր մասնակցել են օրենսդրական փոփոխությունների նախագծերի քննարկումներին և նախագծերի վերաբերյալ գերատեսչությունների կարծիքներն են ապահովել: Բացի այդ, ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակներում միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ արդիական և համակողմանի տեղեկատվությամբ ապահովելու համար մշակվել է Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացի ներդրման վերաբերյալ տեղեկանք: Տեղեկանքը ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից ուղարկվել է Հայաստանի Հանրապետության 18 պետություններում դիվանագիտական ներկայացուցչություններին՝ ԱՃԹՆ-ի տվյալ պետությունների պատասխանատուների հետ համագործակցության հաստատման նպատակով:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ նպատակն իրագործվել է՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակն ապահովվել է:

ՆՊԱՏԱԿԸ	ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվություն		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 50. ԱՃԹՆ զեկույցի նախնական ուսումնասիրություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝նախնական ուսումնասիրություն *Վերջնաժամկետը*՝2017թ. հունիս	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 51. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագիծ *Վերջնաժամկետը*՝2017թ. հուլիս	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 52. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագծի քննարկում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**

	Արդյունքը՝ անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանք *Վերջնաժամկետը*՝ 2017թ. օգոստոս	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 53. Անկախ ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում) և ԱՃԹՆ հաշվետվության մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքները՝ անկախ ադմինիստրատորի մրցույթի հայտարարություն, մրցույթ, անկախ ադմինիստրատորի հետ կնքված պայմանագիր, ԱՃԹՆ հաշվետվության նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. օգոստոս, 2018թ. հուլիս	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, անկախ ադմինիստրատոր
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 54. ԲՇԽ-ի կողմից հաշվետվություն ներկայացնող պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ցանկի կազմում և հաստատում, էականության սահմանում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ հաշվետվություն ներկայացնող պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ցանկ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. նոյեմբեր	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 55. Պետական գերատեսչությունների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ձևաչափի և հաշվետվությունների ներկայացման ժամկետի մշակում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ հաշվետվությունների ձևաչափ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. նոյեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 56. ԱՃԹՆ զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ ուսուցում պետական գերատեսչություններ և արդյունահանող կազմակերպությունների համար	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ուսուցում *Վերջնաժամկետը*՝ 2017թ. դեկտեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ, անկախ ադմինիստրատոր
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 57. Հաշվետվությունների ներկայացման իրավական հիմքերի անհրաժեշտության քննարկում կառավարության հետ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ քննարկում *Վերջնաժամկետը*՝ 2017թ. նոյեմբեր	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 58. Անկախ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման**	**Պատասխանատուները**

ադմինիստրատորի կողմից կազմված ՀՀ ԱՃԹՆ հաշվետվության քննարկում և հաստատում		**կարգավիճակը**	
	Արդյունքը՝ ՀՀ ԱՃԹՆ հաշվետվություն *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հուլիս	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ԲՇԽ,ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 59. Թարգմանչական աշխատանքներ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 60. ՀՀ ԱՃԹՆ հաշվետվության ներկայացում ԱՃԹՆ-ի քարտուղարություն և հրապարակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ ՀՀ ԱՃԹՆ հաշվետվություն *Վերջնաժամկետը*՝ 2018թ. օգոստոս	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 61. ՀՀ ԱՃԹՆ հաշվետվության վերաբերյալ ԱՃԹՆ-ի քարտուղարության նկատառումների քննարկում և դրաց վերաբերյալ հաշվետվության կազմում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**
	Արդյունքը՝ հաշվետվություն *Վերջնաժամկետը*՝ 2018թ. դեկտեմբեր	Չի առնչվում հաշվետու ժամանակահատվածին	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ

ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային ծրագրում ամրագրված «ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվություն» նպատակին հասնելու համար 2017-ին իրականացվել են 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության մշակման աշխատանքներ (իրականացնող՝ ՀԱՀ ՊՀԿ): Մասնավորապես, մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքն ու կառուցվածքը, սեպտեմբերին ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է նախնական ուսումնասիրության հայերեն նախագիծը, իսկ դեկտեմբերին ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է նախնական ուսումնասիրության լրամշակված նախագիծը՝ ԲՇԽ-ի անդամների և ԱՃԹՆ-ի քարտուղարության ներկայացուցիչների կարծիքների ու առաջարկությունների համար: Նախատեսված ժամկետներում ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից նախնական ուսումնասիրության վերջնական նախագիծը չի ներկայացվել:

Հանքարդյունահանող ընկերությունների և պետական գերատեսչությունների կողմից տրամադրվելիք հաշվետվությունների ներկայացման իրավական հիմքերի անհրաժեշտությունը քննարկվել է պետական գերատեսչությունների հետ՝ ԱՃԹՆ-ին համապատասխանեցման օրենսդրական փոփոխությունների մշակման ընթացքում: ԱՃԹՆ-ին համապատասխանեցման օրենսդրական փոփոխությունները մշակվել են ՀԱՀ ՊՀԿ-ի և լրամշակվել ԲՇԽ-ի համապատասխան աշխատանքային խմբի կողմից, որից հետո սկսվել է գերատեսչությունների միջև շրջանառման ու վերջնական լրամշակումների փուլը:

Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը պետք է մշակվեր նախնական ուսումնասիրության հաստատումից հետո, և այս գործողությունը նույնպես ներառված էր Հայաստանում ՄԹ ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրում: Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը չի ներկայացվել ժամանակացույցով սահմանված ժամկետներում (ըստ ժամանակացույցի՝ պետք է ներկայացվեր հոկտեմբերին): Անկախ ադմինիստրատորի ընտրությունը աշխատանքային ծրագրով նախատեսված ժամկետներում չի կատարվել, քանի որ Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհի հաստատման գործընթացը դեռևս չէր ավարտվել:

ԲՇԽ-ի կողմից հաշվետվություն ներկայացնող պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ցանկը

պետք է հաստատվի, իսկ էականությունը սահմանվի 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության շրջանակներում:

Ինչ վերաբերում է պետական գերատեսչությունների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ձևաչափերին և հաշվետվությունների ներկայացման ժամկետներին, ապա այդ միջոցառումը պետք է իրագործվի ԱՃԹՆ-ին համապատասխանեցման օրենսդրական փոփոխությունների ընդունումից և 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության՝ ԲՇԽ-ի կողմից հաստատելուց հետո: Համապատասխանաբար, դասընթացներն էլ պետք է իրագործվեն 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության՝ ԲՇԽ-ի կողմից հաստատելուց, ԱՃԹՆ-ին համապատասխանեցման օրենսդրական փոփոխությունների ընդունումից և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակումից հետո:

Թարգմանչական աշխատանքների շրջանակում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվել է ԱՃԹՆ-ի ստանդարտի հայերեն թարգմանությունը: Այն հաստատվել է ԲՇԽ-ի անդամների կողմից և տեղադրվել Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջում[36]:

ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվության նպատակի իրագործման՝ 2017-ի համար նախատեսված գործողություններն իրականացվել են մասամբ:

[36] http://gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Standard_Arm-new.pdf

3. ԱՃԹՆ-ի պահանջների կատարողականի գնահատում

Պահանջներ	***Առաջընթաց***
2.1. Իրավական դաշտ և ֆիսկալ ռեժիմ	Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ն մշակում է օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունը: Նախագծում պետք է տրվի արդյունահանող ճյուղերի ոլորտը կարգավորող իրավական դաշտի և ֆիսկալ ռեժիմի նկարագրությունը: ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունը չի ներկայացվել համաձայն ժամանակացույցի (առաջին նախագիծը պետք է ներկայացվեր 2017թ. հոկտեմբերի 13-ին):
2.3. Լիցենզիաների ռեգիստր	2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրության մեջ ներկայացվելու են մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման թույլտվությունները, իրավաբանական անձանց անվանումները, թույլտվության համարները, թույլտվության շնորհման ամսաթվերը և տևողությունները, հանքավայրերի և օգտակար հանածոների անվանումները: ԱՃԹՆ-ին համապատասխանեցման շրջանակներում ընդունված օրենքներով սահմանվել է, որ ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունն իր պաշտոնական կայքում հրապարակում է օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝ • թույլտվություն ստացած տնտեսվարող սուբյեկտի անվանումը, • թույլտվության ստացման համար ներկայացված դիմումի տարին, ամիսը, ամսաթիվը, • թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամկետը, • թույլտվության երկարաձգման դեպքում համապատասխան փաստաթղթի համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը,

	թույլտվության երկարաձգման ժամկետը, • ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները և ընդհանուր մակերեսը, • հանքավայրի (տեղամասի) անվանումը, • օգտակար հանածոյի անվանումը:
2.4. Պայմանագրեր	ԱՃԹՆ-ի համապատասխանեցման շրջանակներում ընդունված օրենքներով սահմանվել է, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունն իր պաշտոնական կայքում հրապարակում է մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները՝ բացառելով հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության (տվյալների) հրապարակումը: Բացի այդ, նախարարության կայքում նաև զետեղվում է հետևյալ տեղեկատվությունը. • ընդերքօգտագործման պայմանագրի համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը, • ընդերքօգտագործման պայմանագրում փոփոխություններ կատարելու դեպքում յուրաքանչյուր փոփոխության համար համապատասխան փաստաթղթի համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը, • օգտակար հանածոյի արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ նաև՝ • տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը՝ ըստ հիմնական և ուղեկից բաղադրիչների, • հանքի տարեկան արտադրողականությունը:
2.5. Իրական սեփականություն	2017-ին ՎԶԵԲ-ի աջակցությամբ իրականացված ծրագրի շրջանակում կատարվել է Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն: Վերլուծությունը ներառում է միջազգային չափորոշիչներին համապատասխան իրական սեփականատիրոջ սահմանում: Մշակվել է Հայաստանի մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը: Ճանապարհային քարտեզը հաստատվել է ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից և հրապարակվել ԱՃԹՆ-ի կայքէջում, ինչպես նաև ներկայացվել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն:

3.1. Հետախուզում	ԲՇԽ-ն որոշել է, որ ԱՃԹՆ-ի զեկույցում պետք է տրվի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ընդերքի հետախուզման կարևոր ծրագրերի նկարագրությունը, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում երկրում հաստատված պաշարների ագրեգացված մեծությունը՝ ըստ հանքատեսակների: Բացի այդ, պետք է ներկայացվի նաև տեղեկատվություն, թե հետախուզման աշխատանքները որ փուլում են գտնվում, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման տարածաշրջանները: Քննարկվել են լիազոր մարմնի կայքում ուսումնասիրությունների մասին առկա տեղեկատվության բացերը, դրանց բարելավման անհրաժեշտությունն ու մեխանիզմները:
3.2. Արտադրություն	ԲՇԽ-ն որոշել է, որ ԱՃԹՆ-ի զեկույցում պետք է ներառվեն հաշվետու ընկերությունների արտադրության վերաբերյալ տվյալներ (ծավալը և արժեքը)՝ ըստ արտադրատեսակների: Ընկերությունները պետք է նաև տեղեկություններ տրամադրեն ներքին շուկայում արտադրանքի իրացման վերաբերյալ:
3.3. Արտահանում	ԲՇԽ-ն որոշել է, որ ԱՃԹՆ-ի զեկույցում ներառելու են տվյալները ըստ արտադրատեսակների արտահանման վերաբերյալ, մասնավորապես արտահանման ծավալները և իրացման արժեքները: Պետք է նաև տեղեկություններ տրամադրվեն արտադրատեսակների արտահանման երկրների վերաբերյալ:
4.1. Հարկերի և եկամուտների համակողմանի բացահայտում	ԲՇԽ-ն որոշել է, որ ԱՃԹՆ-ի զեկույցում/հաշվետվություններում ներկայացվող հարկերը և եկամուտներ ընդգրկել առանց շեմերի և երկկողմանի ներկայացնել հետևյալ ֆինանսական հոսքերը՝ 1. շահութահարկ 2. եկամտային հարկ 3. ավելացված արժեքի հարկ 4. ակցիզային հարկ 5. ռոյալթի 6. բնապահպանական վճարներ (հարկ) 7. բնօգտագործման վճարներ 8. մշտադիտարկումների իրականացման վճարներ 9. մաքսատուրքեր և մաքսավճարներ 10. ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար

	պետական տուրք 11. ջրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք 12. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում 13. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը 14. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման վճար 15. հողի հարկ 16. գույքահարկ 17. ՏԻՄ-ին (համայնքին) վճարված վարձակալության վճար 18. տույժեր (նաև տեղական) 19. տուգանքներ (նաև տեղական) 20. հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված ֆինանսական և ոչ ֆինանսական պարտավորություններ: Միայն ընկերությունների կողմից՝ միակողմանիորեն տրամադրվող ֆինանսական հոսքերն են՝ ՏԻՄ-երին, ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ըստ կազմակերպությունների), ինչպես նաև ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերությունները կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ֆիզիկական անձանց դեպքում կներկայացվեն ֆիզիկական անձանց ընդամենը թիվը և վճարված ընդհանուր գումարը):
2.6. Պետության մասնակցություն *4.2. Պետության արդյունահանման մասնաբաժնի վաճառքը կամ բնաիրային տեսքով հավաքագրված այլ եկամուտները* *4.5. Պետական*	ԲՇԽ-ն որոշել է, որ ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում պետական ձեռնարկություններին կատարված և նրանցից ստացված վճարումները, քվազի-ֆիսկալ ծախսերը, շահաբաժինը, հավելավճարները, պետության արդյունահանման մասնաբաժնի վաճառքը կամ բնաիրային տեսքով հավաքագրված այլ եկամուտները ոչ կիրառելի ֆինանսական հոսքեր են: Հայաստանի դեպքում պետական ձեռնարկությունների առկայության հետ կապված ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները

ձեռնարկություններին (ՊՁ-ներին) առնչվող գործարքներ *6.2. Քվազի-ֆիսկալ ծախսեր*	կիրառելի չեն:
4.3. Ենթակառուցվածքների համար մատակարարումները և ապրանքափոխանակության կարգավորումները	ԲՇԽ-ն որոշել է, որ ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում ենթակառուցվածքի ու ապրանքափոխանակության հետ կապված հոսքերը կիրառելի չեն:
4.4. Փոխադրումներից ստացվող եկամուտները	ԲՇԽ-ն որոշել է, որ ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում փոխադրումներից ստացվող եկամուտները կիրառելի չեն:
4.6. Տեղական կառավարման մարմիններ կատարվող վճարումները	ԲՇԽ-ն որոշել է *ԱՃԹՆ-ի* հաշվետվություններում հարկերն ու վճարումներն ընդգրկել առանց շեմերի և երկկողմանի ներկայացնել տեղական կառավարման մարմիններին առնչվող հետևյալ ֆինանսական հոսքերը՝ • հողի հարկ • գույքահարկ • ՏԻՄ-ին (համայնքին) վճարված վարձակալության վճար • տույժեր (նաև տեղական) • տուգանքներ (նաև տեղական) • հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված ֆինանսական և ոչ ֆինանսական պարտավորությունները:
4.7. Ապաագրեգացման աստիճանը	ԲՇԽ-ն որոշել է, որ տվյալները կներկայացվեն ըստ կազմակերպությունների (հարկ վճարողի): Հաշվի առնելով գործող հարկային օրենսդրությունը՝ ներկայում հնարավոր չէ իրականացնել ըստ ծրագրերի տվյալների ներկայացում (project-level reporting): Մասնակիորեն, այն վճարները, որոնք ուղղակիորեն կապված են հանքարդյունաբերության ոլորտում գործունեության հետ, օրինակ՝ տուրքերը և ՀՀ բնապահպանության նախարարությանը վճարվող վճարները, կարտացոլեն ըստ ծրագրերի տվյալները:
4.8. Տվյալների	Համաձայն ԱՃԹՆ-ի խորհրդի որոշման՝ ՀՀ առաջին ԱՃԹՆ-ի

արդիականություն	զեկույցը պետք է հրապարակվի 2018թ. սեպտեմբերի 8-ին և ընդգրկելու է 2016-2017թթ:
6.1. Ընկերությունների կողմից կատարվող սոցիալական ծախսեր	ԲՇԽ-ն որոշել է, որ ընկերությունները միակողմանիորեն կտրամադրեն հետևյալ ֆինանսական հոսքերի մասին տեղեկատվություն՝ • ՏԻՄ-երին, ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ըստ կազմակերպությունների), • ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերությունները կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ֆիզիկական անձանց դեպքում կներկայացվեն ֆիզիկական անձանց ընդամենը թիվը և վճարված ընդհանուր գումարը):

4. ԱՃԹՆ-ի գործընթացում հայտնաբերված ուժեղ և թույլ կողմերը

Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման ընթացքում հայտնաբերված ուժեղ կողմերն են.

- ԱՃԹՆ-ի՝ Հայաստանում առավել արդյունավետ ներդրման համար համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախաձեռնումը, ինչը իրավական հիմքեր նախապատրաստեց 2018թ. հրապարակվելիք առաջին զեկույցի համար: Համաձայն օրենսդրական փոփոխությունների՝ ԱՃԹՆ-ին հաշվետու սահմանվեցին մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընդերքօգտագործողները և մի շարք գերատեսչություններ՝ բնապահպանության նախարարությունը, պետական եկամուտների կոմիտեն, տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը (համակարգելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշվետվությունների տրամադրումը և դրանց տեղադրումը ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակում): Օրենսդրական փոփոխությունների նախագծով սահմանվեց նաև հաշվետու մարմինների և հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից տրամադրվելիք տեղեկատվությունը:
- Համաձայն ԱՃԹՆ-ի համապատասխանեցման շրջանակներում օրենսդրական փոփոխությունների նախագծի՝ մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի հասանելիությունը հանրության համար: 2018 թվականի 2-րդ եռամսյակից պայմանագրերը հասանելի կլինեն էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքում:
- ԱՃԹՆ-ի ներդրմանն ուղղված՝ կառավարության կողմից իր հանձնառությունը հավուր պատշաճի իրականացման համար բոլոր հնարավոր քայլերի ձեռնարկումը, օրինակ՝ կառավարության կողմից ստանձնած հանձնառությունների շարունակականության պահպանման նպատակով դրանց ֆորմալ ամրագրումը կարևոր փաստաթղթերում՝ օրինակ կառավարության 2017-2022թթ. ծրագրում, իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի հրապարակումից հետո այն կառավարության որոշման տեսքով ընդունելը, վարչապետի որոշմամբ միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելը, հակակոռուպցիոն նիստի օրակարգում այն ներառելը և ԱՃԹՆ-ի համապատասխանեցման օրենսդրական փոփոխությունների նախագծերի՝ խորհրդարան հատուկ ռեժիմով ուղարկելը:
- Դոնոր կազմակերպությունների հետաքրքրության բարձր մակարդակը Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացում և ցուցաբերված համակողմանի աջակցությունը: 2017-ին դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվել են ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրության նախագծի մշակումը

(Հայաստանում ՄԹ դեսպանատունը), հաղորդակցության ռազմավարության նախագծի մշակումը (Հայաստանում ՄԹ դեսպանատունը), օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության նախագծի մշակումը (Հայաստանում ՄԹ դեսպանատունը), Հայաստանի մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի նախագիծ և Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն (ԿԶԵԲ-ի լոնդոնյան գրասենյակ), Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի մշակում (Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչություն, հայտարարվել է մրցույթ՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը ստեղծելու համար ընկերություն ընտրելու համար), իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ մարզային այցելություններ, տպագրություն, սոցիալական հոլովակների պատրաստում, ԱՃԹՆ-ի ստանդարտի թարգմանություն, ԱՃԹՆ-ի քարտուղարության փորձագետների աշխատավարձերի վճարում (ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելություն), աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակմանը (Համաշխարհային բանկ, միջոցառումները նախատեսվում են 2018թ-ից)

- Բազմաշահառու խմբի՝ տարբեր խնդիրների շուրջ եռակողմ քննարկման հարթակի վերածվելը, որտեղ բոլոր շահագրգիռ կողմերը կարող են առաջ քաշել իրենց հուզող հարցերը և հնարավորության սահմաններում՝ ստանալ պատասխանել: Հայաստանում ԲՇԽ-ն եզակի հարթակ է դարձել, որում ներգրավված կողմերը կարող են նստել կլոր սեղանի շուրջ և կայացնել կոնսենսուսային որոշումներ: ԲՇԽ-ն նաև ներգրավված է հանքարդյունաբերության ոլորտին առնչվող ռազմավարությունների մշակմանը. նրանց հետ խորհրդակցություններ են անցկացվում, և նախագծերը ուղարկվում են ԲՇԽ-ին՝ կարծիքի:
- Հայաստանի կառավարության պատրաստակամությունը՝ իր վրա վերցնելու ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքի վարձատրության և պահպանման ծախսերը և ԱՃԹՆ-ի տարեկան անդամավճարի ծախսերը՝ վերահաստատելով հավատարմությունը ԱՃԹՆ-ն ներդնելու վերաբերյալ հանձնառությանը:
- ԱՃԹՆ-ի կայունությունը ՀՀ կառավարության փոփոխությունների դեպքում, ինչը արտահայտվեց նրանով, որ ԱՃԹՆ-ի ներդրումն ընկած էր վերջին երեք կառավարությունների օրակարգերում:
- Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության արհեստավարժությունը:

ԱՃԹՆ-ի ներդրման ընթացքում ի հայտ են եկել նաև մի շարք թույլ կողմեր.

- ԲՇԽ-ի հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամների ընտրության համար համապատասխան խմբակցության կողմից սահմանված հստակ ընթացակարգերի բացակայությունը, ինչը կապահովեր ԲՇԽ-ի անդամների ընտրության սահուն ընթացքը և, այդպիսով, ԲՇԽ-ի կայունությունը: Հստակ սահմանված ընթացակարգերի բացակայությամբ է

պայմանավորված այն հանգամանքը, որը 2017թ. մարտից, երբ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ Էրիկ Գրիգորյանի անդամությունը դադարեցվեց՝ այլ պաշտոնի անցնելու կապակցությամբ, խմբակցությունն ի վիճակի չեղավ ընտրելու նոր անդամի կամ ԲՇԽ-ի այլընտրանքային անդամին շնորհելու ԲՇԽ-ի անդամի կարգավիճակ: Հանքարդյունահանող ընկերությունների և կառավարության խմբակցությունները ևս չունեն այլընտրաքային անդամների ինստիտուտ:

- ԲՇԽ-ի կողից ձևավորված աշխատանքային խմբերը ցուցաբերել են ցածր արդյունավետություն: Բացի խմբերի ծանոթացման անդրանիկ հանդիպումներից, որտեղ ներկայացվել են խմբի գործառույթները, և խմբերի գործունեությանն առնչվող նախագծերը մշակող փորձագետների հետ քննարկումներից, աշխատանքային խմբերը որևէ այլ գործունեություն չեն իրականացրել և կրել են ֆորմալ բնույթ:
- ԲՇԽ-ի կարողությունների ոչ պատշաճ մակարդակը, ինչի հետևանքով ԲՇԽ-ի անդամները ներկայացված հարցերը խորությամբ չեն ուսումնասիրում ու նրանց շրջանում առկա է շահագրգռվածության ցածր մակարդակ:
- Ֆինանսավորման և ծրագրերի մեկնարկային ժամկետների անորոշությունը՝ կապված Համաշխարհային բանկի ընթացակարգերի հետ: Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհով նախատեսված գործողությունները պետք է սկսվեին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության դրամաշնորհի ավարտից անմիջապես հետո (համաձայն ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի), ինչը կապահովեր ԱՃԹՆ-ի ներդրման շարունակականություն: Ժամանակային լագը պատճառ է հանդիսացել ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրով նախատեսված գործողությունների հետաձգման համար:
- ԱՃԹՆ-ի քարտուղարության ֆինանսավորման սակավությունը, ինչը չի տալիս հնարավորություն ներգրավել նոր մասնագետներ, օրինակ՝ իրավաբան կամ հանրային հաղորդակցության մասնագետ:
- Շահագրգիռ կողմերի հետ իրականացվող աշխատանքներում անկանխատեսելի իրողությունների հետևանքով ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի որոշ միջոցառումների ժամանակացույցից շեղումներ, օրինակ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի ՊՀԿ-ի կողմից մշակվող նախագծերը ժամանակին չներկայացնելը:
- Չնայած ԲՇԽ-ի իրականացրած գործողություններին՝ ՋԼՄ-ների պրոակտիվ ներգրավվածության ցածր մակարդակը ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացում և, ընդհանուր առմամբ, լայն հանրության շրջանում ԱՃԹՆ-ի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բավականին ցածր է:
- Հանքարդյունահող կազմակերպությունների շրջանում ընդհանուր փորձի պակասը՝ ժամակակից և թափանցիկ հանքարդյունաբերությամբ զբաղվելու դրական կողմերի մասով:

- ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրումը շատ հանքարդյունահանող ընկերությունների կողմից որպես հնարավոր վտանգ ընկալվելը, քանի որ բացակայում է թափանցիկ աշխատելու մշակույթը: Հարկ է հաշվի առնել, որ թափանցիկ գործելաոճի մշակույթը Հայաստանում դեռևս ամբողջությամբ չի ձևավորվել, այստեղից էլ գալիս են հիմնական խնդիրները:
- Քաղհասարակության խմբակցության անդամների վրա տարբեր կողմերից ազդեցության գործադրման ռիսկեր: Ըստ քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների՝ այդ խնդրի լուծում կարող է լինել ԲՇԽ-ում ընտրվող և ընտրման հայտ ներկայացնող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից իրենց ֆինանսական աղբյուրների ամբողջական հրապարակումը, ինչպես նաև հանքարդյունաբերական ընկերությունների, դրանց հետ փոխկապակցված հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների կողմից հրապարակայնորեն հասանելի հաշվետվությունների ուսումնասիրումը:

5. Իրականացման ընդհանուր ծախսերը

Նպատակը	Հ/Հ	Միջոցառում	Ծախսը՝ ըստ աշխատան-քային ծրագրի (ԱՄՆ դոլար)	Փաստացի ծախսը	Ֆինանսավոր-ման աղբյուրը	Կարգավիճակը	Իրականացումը
Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում							
	1	ԱՃԹՆ պաշտոնական կայքի տեխնիկական առաջադրանքի մշակում, կազմակերպության ընտրության մրցույթի անցկացում, կազմակերպության հաստատում	1000		ՀՀ պետական բյուջե	կատարված	Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի տեխնիկական առաջադրանքը մշակվել է 2017թ. նոյեմբերին և հաստատվել է ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից 2017թ. դեկտեմբերի 12-ին կայացած նիստի ժամանակ:
	2	ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի ստեղծում	60000	16000	ՄԱԶԾ, ՀՀ պետական բյուջե	ընթացիկ	ՀՀ ԱՃԹՆ-ի կայքը և տվյալների բազաները տեղեկայվելու են ՀՀ կառավարության աշխատակազմի սերվերում: 2017թ. մարտի 9-ի ՀՀ կառավարության N 213 - Ն որոշմամբ ՀՀ կառավարության աշխատակազմի սերվերի հզորացման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 1,461,600 ՀՀ դրամ սերվերի ռեզերվային սարքավորումների ձեռք բերման համար: Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի ստեղծման աշխատանքների մրցույթը հայտարարվել է

						ՄԱԶԾ-ի կողմից 2017թ. դեկտեմբերի 12-ին, որում հաղթող է ճանաչվել Հելիքս Կոնսալթինգ ՍՊԸ-ն, որի հետ 2018թ. հունվար ամսին կնքվել է պայմանագիր: Կայքի ստեղծման աշխատանքները պետք է իրականացվեն մինչև 2018 թվականի մայիսի 15-ը:
3	Կայքի ընթացիկ սպասարկում	10000				Կայքի ընթացիկ սպասարկման աշխատանքները կսկսվեն կայքի գործարկումից հետո:
4	ԱՃԹՆ կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)				ընթացիկ	2017 թվականի ընթացքում ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության կողմից մշտապես թարմացվել են ՀՀ կառավարության պաշտոնական էջի ԱՃԹՆ Հայաստանի ենթաէջերը հայերեն և անգլերեն լեզուներով: Տեղադրվել են նորություններ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ, ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման եռամսյակային հաշվետվությունները, այլ փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի արձանագրությունները:
5	Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում	45000	15900	ՀՀ պետական բյուջե	ընթացիկ	Տվյալ տողում ներկայացված ծախսը վերաբերում է ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացը լուսաբանող հաղորդաշարի պատրաստմանն ու հեռարձակմանը ՀՀ կառավարության աշխատակազմի Հրապարակում հեռուստատեսային հաղորդման շրջանակում: Բացի այդ, 2017թ. ընթացքում մշակվել և տպագրվել է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության

						աջակցությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ 2 տեղեկատվական թերթիկ՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Ստեղծվել և հրապարակվել են 5 սոցիալական հոլովակներ և մեկ տեսաֆիլմ ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ, որոնց, ինչպես նաև իրազեկման նպատակով կազմակերպված մարզային այցելությունների ու ԱՃԹՆ-ի անդամակցությանը նվիրված շնորհանդեսի փաստացի ծախսը ներկայացված է **միջոցառում 9-ում:**
6	Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, facebook և այլ ցանցեր)				ընթացիկ	2017 թվականին ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության կողմից իրականացվել է Facebook, YouTube և Twitter սոցիալական ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների լուսաբանում:
7	Հաղորդակցության ռազմավարության մշակում	2000	54000	Հայաստանում ՄԹ դեսպանատուն	հետաձգված/ընթացիկ	Հայաստանում ՄԹ դեսպանատան օժանդակությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքները պատվիրակվել են ՀԱՀ ՊՀԿ-ին: Աշխատանքները իրականացվել են տեխնիկական աաջադրանքով հաստատված վերջնաժամկետից ուշացումով: 2018թ. փետրվարի դրությամբ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է հազորդակցության ռազմավարության առաջին նախագիծը: **Սույն ծրագրի շրջանակում ֆինանսավորվել**

							են նաև 7-րդ, 16-դ, 20-րդ, 50-րդ և 51-րդ միջոցառումները:
	8	Հաղորդակցության ռազմավարության հաստատում				հետաձգված	տես՝ միջոցառում 7
	9	Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում	10000	22000	ԱՄՆ ՄԶԳ, ՀՀ պետական բյուջե	ընթացիկ	
	10	ԱՃԹՆ զեկույցի պաշտոնական ներկայացում / կոնֆերանս	15000				
Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում							
	11	Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում	7000	23800	ՎԶԵԲ	կատարված	Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը ՎԶԵԲ-ի կողմից վարձված փորձագետների կողմից մշակվել է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: ԲՇԽ-ն ճանապարհային քարտեզը հաստատել է 2017թ. դեկտեմբերին: Ճանապարհային քարտեզը հրապարակվել է 2018թ. հուվարի 1-ին՝ համապատասխան ԱՃԹՆ-ի խորհրդի սահմանած ժամկետի:
	12	Ճանապարհային քարտեզի նախագծի հանրային քննարկումներ	1000			ընթացիկ	տես՝ միջոցառում 11 ՎԶԵԲ-ի փորձագետները քննարկումներ են ունեցել ոչ միայն ԲՇԽ-ի անդամների, այլև շահագրգիռ և կոմպետենտ այլ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և գործարար համայնքի ներկայացուցիչների հետ:

	13	Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի հաստատում				կատարված	տես՝ միջոցառում 11
	14	Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի ներկայացում ԱՃԹՆ քարտուղարություն				կատարված	տես՝ միջոցառում 11
ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտում							
	15	ԲՇԽ-ի կողմից տեխնիկական առաջադրանքի կազմում, որի համաձայն տեղական և միջազգային խորհրդատուները կիրականացնեն ուսումնասիրություն անհամապատասխանությունների բացահայտման նպատակով	1000			կատարված	Իրավական դաշտի ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը մշակվել և հաստատվել է ԲՇԽ-ի կողմից 2017թ. հունիս-հուլիս ամիսներին:
	16	Օրենսդրության ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում	15000	տես՝ միջոցառում 7	Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատուն	մասնակի կատարված	ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից 2017թ. նոյեմբերին ներկայացվել է ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ, որը քննարկվել է շահագրգիռ մարմինների և ԲՇԽ-ի հետ: ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը 2017թ. դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ կառավարություն, որը ՀՀ կառավարությունը հավանության է արժանացրել 2018թ. հունվարի 18-ին: Օրենքների փաթեթը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից դեռևս չի ներկայացվել Իրավական դաշտի ուսումնասիրության հաշվետվությունը:

	17	Հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին				հետաձգված	տես՝ միջոցառում 16
	18	ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և գործողությունների պլանի քննարկում և հաստատում				հետաձգված	տես՝ միջոցառում 16
Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն և ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզի մշակում							
	19	Տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում	1000		ՀՀ պետական բյուջե	կատարված	Իրավական դաշտի ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը մշակվել և հաստատվել է ԲՇԽ-ի կողմից 2017թ. հունիս-հուլիս ամիսներին:
	20	Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով	5000	տես՝միջոցառում 7	Հայաստանում ՄԹ դեսպանատուն	ընթացիկ	Ըստ իրավական դաշտի ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի՝ ճանապարհային քարտեզը հանդիսանում է Իրավական դաշտի ուսումնասիրության հաշվետվության մաս: տես՝ միջոցառում 16
	21	Ճանապարհային քարտեզի հաստատում ԲՇԽ-ի կողմից	50000			հետաձգված	տես՝ միջոցառում 16 և 20
	22	Գործողությունների պլանի իրականացում				հետաձգված	տես՝ միջոցառում 16 և 20
	23	Մասնակցություն ոլորտին վերաբերող քաղաքականության մշակմանը				ընթացիկ	
Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում							
	24	ՀՀ վարչապետի հայտարարություն					
	25	ԱՃԹՆ իրազեկման միջոցառումներ					

26	ԲՇԽ-ի անդամների առաջադրում					
27	ԲՇԽ-ի անդամների համար դասընթաց-սեմինարներ					
28	ԲՇԽ-ի աշխատակարգի մշակում					
29	ԲՇԽ-ի աշխատակարգի հաստատում					
30	ԱՃԹՆ խորհրդի նիստերին մասնակցություն					
31	ԲՇԽ-ի նիստ					
32	ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստ, մեկնարկի միջոցառում					
33	«ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման ընդունում					
34	Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի մշակում					
35	Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի հաստատում					
36	ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտի մշակում					
37	ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտի հաստատում					

38	Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն				ընթացիկ	Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից իրականացված աշխատանքների արդյունքում համագործակցության ծրագրեր են հաստատվել ԱՄՆ ՄԶԳ-ի, ՎԶԵԲ-ի, ՄԹ դեսպանատան հետ: ՀԲ-ի օժանդակությունը ստանալու համար կազմվել է դրամաշնորհային հայտադիմում և ծրագրային կետեր, համակարգված աշխատանքներ են իրականացվելՀՀ-ում և արտերկրում դիվանագիտական ներկայացուցիչների հետ: Նախնական քննարկումներ են անցկացվել GIZ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների հետ:
39	ՀՀ ԱՃԹՆ թեկնածության հայտի ներկայացում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն					
40	Հայաստանի ԱՃԹՆ քարտուղարության հիմնում և աշխատանքների ընթացք	120000	63900	ԱՄՆ ՄԶԳ, ՀՀ պետական բյուջե	կատարված	2017թ. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության գործառույթները իրականացվել են ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացված Հանքարդյունաբերության ոլորտի հզորացման ծրագրի փորձագետները: ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը հիմնվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ներքո 2018թ. հունվարին:
41	ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի տարեկան հաշվետության կազմում և հաստատում				ընթացիկ	ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվությունը պետք է մշակվի մինչև հուլիսի 1-ը՝ համապատասխան ԱՃԹՆ-ի խորհրդի սահմանած ժամկետի:

42	ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, կիսամյակային, տարեկան)				կատարված	2017թ. մշակվել, ԲՇԽ-ի կողմից հաստատվել և հրապարակվել են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների եռամսյակային հաշվետվությունները:
43	Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ անդամ երկրների հետ				ընթացիկ	
44	Մասնակցություն ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների	70000	11500	Համաշխարհային բանկ, ԱՄՆ ՄԶԳ	կատարված	Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ԲՇԽ-ի 2 անդամներ մասնակցել են 2017թ. մարտին Կոլումբիայում կայացած ԱՃԹՆ-ի կոնֆերանսին: Իսկ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ ԱՃԹՆ-i քարտուղարության ղեկավարը մասնակցել է Ջակարտայում կայացած Իրական սեփականատերերի բացահայտման թեմայով կոնֆերանսին: Հանքարդյունահանող ընկերությունների ներկայացուցիչները տվյալ կոնֆերանսին ասնակցել են ինքնաֆինանսավորմամբ:
43	ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի անցկացում	2000			կատարված	2017թ. ընթացքում ՀՀ ԱՃԹՆ ԲՇՆ-ն անցկացրել է 5 պաշտոնական նիստ:
46	ԱՃԹՆ-ի աշխատանքային պլանի վերանայում և հաստատում				ընթացիկ	
47	ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում				ընթացիկ	2017թ. ընթացքում ԲՇԽ-ն ձևավորել է 5 աշխատանքային խումբ:

	48	2019-2020 ԱՃԹՆ աշխատանքային ծրագրի մշակում և հաստատում					
	49	ԱՃԹՆ անդամավճարի վճարում	20000				
ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվություն							
	50	ԱՃԹՆ զեկույցի նախնական ուսումնասիրություն	1000	տես՝ միջոցառում 7	Հայաստանում ՄԹ դեսպանատուն	ընթացիկ	Հայաստանում ՄԹ դեսպանատան օժանդակությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում նախնական ուսումնասիրության մշակման աշխատանքները պատվիրակվել են ՀԱՀ ՊՀԿ-ին: Աշխատանքները իրականացվել են տեխնիկական աաջադրանքով հաստատված վեջնաժամկետից ուշացումով: 2018թ. փետրվարի դրությամբ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է նախնական ուսումնասիրության վերջնական նախագիծը:
	51	Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում	1000	տես՝ միջոցառում 7	Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատուն	ընթացիկ	Հայաստանում ՄԹ դեսպանատան օժանդակությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները պատվիրակվել են ՀԱՀ ՊՀԿ-ին: Աշխատանքներն իրականացվել են տեխնիկական առաջադրանքով հաստատված վեջնաժամկետից ուշացումով: 2018թ. փետրվարի դրությամբ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագիծը:

	52	Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագծի քննարկում և հաստատում				հետաձգված	տես՝ միջոցառում 51
	53	Անկախ ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում) և ԱՃԹՆ հաշվետվության մշակում	100000		Համաշխարհային բանկ	հետաձգված	Անկախ ադմինիստրատորի մրցույթի հայտարարությունը հնարավոր կլինի հրապարակել 2018թ. 2-րդ եռամսյակի սկզբին՝ Համաշխարհային բանկի Հայաստանի ԱՃԹՆ-ին աջակցության դրամաշնորհային ծրագրի հաստատումից հետո:
	54	ԲՇԽ-ի կողմից հաշվետվություն ներկայացնող պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ցանկի կազմում և հաստատում, էականության սահմանում				ընթացիկ	տես՝ միջոցառում 53
	55	Պետական գերատեսչությունների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ձևաչափի և հաշվետվությունների ներկայացման ժամկետի մշակում և հաստատում				ընթացիկ	տես՝ միջոցառում 53
	56	ԱՃԹՆ զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ	5000			հետաձգված	

		ուսուցում պետական գերատեսչություններ կարդյունահանող կազմակերպությունների համար					
	57	Հաշվետվությունների ներկայացման իրավական հիմքերի անհրաժեշտության քննարկում կառավարության հետ				ընթացիկ	տես՝ միջոցառում 16
	58	Անկախ ադմինիստրատորի կողմից կազմված ՀՀ ԱՃԹՆ հաշվետվության քննարկում և հաստատում					
	59	Թարգմանչական աշխատանքներ	10000	1250	ԱՄՆ ՄԶԳ, ՀՀ պետական բյուջե	ընթացիկ	2017թ. ԱՃԹՆ-ի ստանդարտը թարգմանվել է հայերեն: Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից իրականացվել են այլ նյութերի՝ ուղեցույցների և ձևաչափերի թարգմանչական աշխատանքներ:
	60	ՀՀ ԱՃԹՆ հաշվետվության ներկայացում ԱՃԹՆ-ի քարտուղարություն և հրապարակում					
	61	ՀՀ ԱՃԹՆ հաշվետվության վերաբերյալ ԱՃԹՆ-ի քարտուղարության նկատառումների քննարկում և դրաց վերաբերյալ հաշվետվության կազմում					

*Սույն ծրագրի շրջանակում 1-ին, 12-րդ, 15-րդ, 19-րդ և 43-րդ միջոցառումները իրականացվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության և ՀՀ կառավարության աշխատակազմի

Միջոցառումների կարգավիճակը
Իրականացված
Չսկսված
Ընթացիկ

կողմից:

Ծանոթագրություն: հաշվարկը իրականացվել է 2018թ. հունվարի 12-ի փոխարժեքներով. EUR = 1.19USD, 1 GBP =1.35USD 1USD = 480 AMD

6. Լրացուցիչ դիտարկումներ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրի 6-րդ միջոցառման անվանման («Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով») հետ կապված՝ ունի դիտարկում. այն է՝ հետագայում տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկվել է ամրագրել, որ այս միջոցառումն իր մեջ ներառում է զուտ ոլորտի վերաբերյալ հասարակության լայն շրջանակների մոտ իրազեկվածության մակարդակի բարձրացում, նրանց շրջանում խնդիրների ճիշտ պատկերացում և գնահատում:

7. ԱՃԹՆ-ի սույն հաշվետվությունը քննարկվե՞լ է բազմաշահառու խմբից դուրս

ԲՇԽ-ի խմբակցությունները ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվությունը քննարկել են լայն խմբակցության հետ: Մասնավորապես, քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվության նախագիծն ուղարկվել է քաղաքացիական հասարակության ավելի քան 100 ներկայացուցիչների էլեկտրոնային հասցեներին՝ նրանց կարծիքը ստանալու համար, քանի որ սեղմ ժամկետներում հնարավոր չէր կազմակերպել հանդիպում-քննարկում: Հասցեատերերի ցանկը վերցվել է նախկինում ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության ձևավորման քննարկումների կազմակերպման հասցեատերերի ցանկից: Նամակին արձագանքելու և կարծիքները հայտնելու համար սահմանված վերջնաժամկետում արձագանքներ չեն ստացվել:

ԲՇԽ-ի արդյունահանող կազմակերպությունների խմբակցությունը հանդիպումներ է ունեցել տարբեր հանքարդյունահանող ընկերությունների ներկայացուցիչների հետ և ներկայացրել ԱՃԹՆ-ի 2017 թվականի տարեկան հաշվետվության նախագիծը: Հաշվետվության վերաբերյալ քննարկում է տեղի ունեցել Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության կազմում գործող Կայուն զարգացման խմբում, որի մասնակիցներ են հանդիսանում գործող արդյունահանող և երկրաբանական հետախուզություն իրականացնող ընկերությունների ներկայացուցիչներ: Բացի այդ, ևս մեկ քննարկում է տեղի ունեցել ԲՇԽ-ի կազմում ընդգրկված հիմնական և նոր ընտրված երեք այլընտրանքային անդամների մասնակցությամբ, որոնք ներկայացնում են երեք ընկերություններ: Նախագծի լրամշակման փուլում բոլոր առաջարկներն ու դիտարկումները հաշվի են առնվել:

8. Հաշվետու ժամանակահատվածում բազմաշահառու խմբում անդամակցության մանրամասներ

2017-ին անցկացվել են ԲՇԽ-ի 5 նիստեր (որոնցից 2-ը աշխատանքային բնույթի էին և առնչվում էին 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրության մի շարք հարցերի): Նիստերի ընթացքում ապահովվել է ԲՇԽ-ի աշխատակարգի պահանջները. այն է՝

ԲՇԽ-ի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ԲՇԽ-ի կամ ԲՇԽ-ի անդամներին փոխարինող այլընտրանքային անդամների 2/3-ը և յուրաքանչյուր խմբակցության անդամների կեսից ավելին:

2017թ. մայիսի 5-ին կայացած ԲՇԽ-ի նիստին չի ապահովվել հանքարդյունահանող կազմակերպությունների խմբակցության անդամների 2/3-ը (խմբակցության 4 անդամներից ներկա էր 1-ը): Մայիսի 5-ի հանդիպմանը հանքարդյունահանող կազմակերպությունների խմբակցությունը ներկայացնող ԲՇԽ-ի անդամը հայտարարեց, որ նախքան նիստը խմբակցության նիստից բացակայող անդամների հետ քննարկվել են նիստի օրակարգում ներառված հարցերը, և որ ինքը ներկայացում է նաև խմբակցության մյուս անդամների կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ:

2017թ. հոկտեմբերի 17-ին կայացած ԲՇԽ-ի նիստին (նիստը որակվել է որպես աշխատանքային և նիստի ընթացքում ԲՇԽ-ի որոշումներ չեն կայացվել) չի ապահովվել քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների 2/3-ը (խմբակցության 5 անդամներից ներկա էիր 2-ը):

Հանքարդյունահանող ընկերությունների ներկայացուցիչների բացակայությունները պայմանավորված են նրանց աշխատանքի հիմնական վայրի՝ Երևանից դուրս գտնվելու հետ, իսկ քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների բացակայությունը պայմանավորված է Հայաստանից դուրս գտնվող միջոցառումներին մասնակցության հետ: Նշված խնդիրները լուծելու համար նիստերի ընթացքում հնարավորության դեպքում ապահովվում է տեսակապ, և ԲՇԽ-ի անդամները կարող են առցանց՝ տեսակապի միջոցով մասնակցել հանդիպմանը (որոշ նիստերի ԲՇԽ-ի անդամները մասնակցել են տեսակապի միջոցով):

Համաձայն աշխատակարգի մեկ այլ պահանջի՝ ԲՇԽ-ի անդամի՝

ԲՇԽ-ի աշխատանքներին մասնակցելու անհնարինության կամ մեկ տարվա ընթացքում ԲՇԽ-ի նիստերի ավելի քան կեսից անհարգելի բացակայելու դեպքում՝ նախագահը վերջինիս փոխարինման հարցը ներկայացնում է ԲՇԽ-ի քննարկմանը:

Նիստերի կեսից ավելիից բացակայել են ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ներկայացնող անդամ Սոնա Այվազյանը, ԲՇԽ-ի արդյունահանող կազմակերպությունների խմբակցությունը ներկայացնող անդամներ Պերճ Խաչատրյանը և Արթուր Նիկողոսյանը: Նշված անդամների բացակայությունները համարվել են հարգելի և ԲՇԽ-ի նախագահը վերջիններիս փոխարինման հարցը չի բարձրացրել: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ԲՇԽ-ի նիստերի և անդամների մասնակցության վերաբերյալ տվյալներ:

ԲՇԽ-ի խմբակցությունը	*ԲՇԽ-ի անդամը, կազմակերպությունը*	*Ամսաթիվը*				
		05.05.2017	*18.07.2017*	*10.10.2017*	*17.10.2017*	*06.12.2017*
ԲՇԽ-ի նախագահ	**Դավիթ Հարությունյան**					
Պետական մարմիններ	**Կարեն Իսախանյան** Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն					
	Տիգրան Խաչատրյան Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն					
	Դավիթ Անանյան Ֆինանսների նախարարություն					
	Խաչիկ Հակոբյան Բնապահպանության նախարարություն					
	Վարդան Գևորգյան Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն					
Քաղաքացիական հասարակություն	**Արթուր Գրիգորյան** «Էկոիրավունք» ՀԿ					
	Սոնա Այվազյան «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն					
	Ինգա Զարաֆյան «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ					
	Հարություն Մովսիսյան ԵՊՀ կայուն զարգացման կենտրոն					
	Արթուր Համբարձումյան «ՍիվիլՎոյս» ՀԿ (ԲՇԽ-ի ժամանակավոր անդամ)					
Հանքարդյունահանող ընկերություններ	**Պերճ Խաչատրյան** «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ					
	Արմեն Ստեփանյան «Լիդիան Արմենիա» ՓԲԸ					
	Վահե Վարդանյան					

	«Գեոմայնինգ» ՍՊԸ					
	Արթուր Նիկողոսյան «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբի-նատ» ՓԲԸ					

ներկա
բացակա

Հաստատվել է բազմաշահառու խմբի կողմից՝

Ամսաթիվ՝ հունիսի 29, 2018թ.